

<i>Համարը</i>	N 1241-Ն	<i>Տեսակը</i>	Ինկորպորացիա
<i>Տիպը</i>	Որոշում	<i>Կարգավիճակը</i>	Գործում է
<i>Սկզբնաղբյուրը</i>	ՀՀՊՏ 2011.09.14/52(855) Հոդ.1315	<i>Ընդունման վայրը</i>	Երևան
<i>Ընդունող մարմինը</i>	ՀՀ կառավարություն	<i>Ընդունման ամսաթիվը</i>	25.08.2011
<i>Ստորագրող մարմինը</i>	ՀՀ վարչապետ	<i>Ստորագրման ամսաթիվը</i>	02.09.2011
<i>Վավերացնող մարմինը</i>		<i>Վավերացման ամսաթիվը</i>	
<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</i>	24.09.2011	<i>Ուժը կորցնելու ամսաթիվը</i>	

- ⊕ Կապեր այլ փաստաթղթերի հետ
- ⊕ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆՆԵՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, «ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆՆԵՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ «ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆՆԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 օգոստոսի 2011 թվականի N 1241-Ն

**«ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆՆԵՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, «ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆՆԵՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ «ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆՆԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ ու 36-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**

1. Թույլատրել «Հանրակացարաններ» փակ բաժնետիրական ընկերությանը (քաղ. Երևան, Մուղղովական 29/1) սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ 170.898.369 դրամ արժեք, 21037.02 քառ. մետր մակերես և 2.642487 հեկտար հողամաս ունեցող գույքով վճարել այդ ընկերության կողմից տեղաբաշխված՝ պետությանը պատկանող համապատասխան թվով բաժնետոմսերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռքբերման դիմաց:

*(1-ին կետը փոփ. 22.11.12 N 1462-Ն, 20.10.16 N 1070-Ն)*

2. «Հանրակացարաններ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ձեռք բերված բաժնետոմսերի մարումից հետո՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համապատասխան չափով նվազեցնել ընկերության կանոնադրական կապիտալը:

3. Ավելացված արժեքի հարկի վճարումն իրականացնել «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով:

4. «Հանրակացարաններ» փակ բաժնետիրական ընկերության գույքի կազմից առանձնացվող գույքն ամրացնել «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության միզրացիոն պետական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին:

*(4-րդ կետը փոփ. 02.04.15 N 345-Ն, 20.10.16 N 1070-Ն)*

5. Ստեղծել «Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

6. Հաստատել «Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝

համաձայն N 1 հավելվածի:

7. Սահմանել, որ «Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

1) Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված ուղեգրերի հիման վրա հանրակացարանային սենյակներում բնակեցման աշխատանքների իրականացումը.

2) *(Ենթակետն ուժը կորցրել է 02.04.15 N 345-Ն)*

*(7-րդ կետը փոփ. 02.04.15 N 345-Ն)*

8. Հայաստանի Հանրապետության կողմից ձեռք բերված՝ սույն որոշման N 2 հավելվածում նշված գույքը գրանցել որպես Հայաստանի Հանրապետության սեփականություն:

*(8-րդ կետը խմբ. 02.04.15 N 345-Ն)*

8.1. Թույլատրել «Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սույն որոշման N 2 հավելվածում ընդգրկված շենքերում իրականացնել ընդհանուր օգտագործման տարածքների (այդ թվում՝ նկուղների և տանիքների) պահանջվող սանիտարափոխանակ պայմանների և լուսավորության ապահովման, աղբահանության կազմակերպմանն ուղղված սպասարկման աշխատանքներ:

*(8.1-ին կետը լրաց. 02.04.15 N 345-Ն)*

9. Սահմանել, որ «Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով չեն հանձնվում պետական սեփականություն հանդիսացող հողեր, նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկը գերազանցող գույք, պետական սեփականություն հանդիսացող շենքեր, շինություններ և պատմամշակութային նշանակություն ունեցող գույք:

10. Թույլատրել «Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպությանն իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակը՝ տարածքների սպասարկման աշխատանքների իրականացում:

*(10-րդ կետը փոփ. 02.04.15 N 345-Ն)*

11. «Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման, ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «գ», «ե» և «է» ենթակետերով ու 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայությանը:

*(11-րդ կետը փոփ. 02.04.15 N 345-Ն, 20.10.16 N 1070-Ն)*

12. Սահմանել, որ «Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցման, կնիքի, դրոշմակնիքի ձեռքբերման, ինչպես նաև սույն որոշման համաձայն նրան հանձնվող գույքի գրանցման ծախսերը կատարվում են սեփական միջոցների հաշվին:

13. Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով «Հանրակացարաններ» փակ բաժնետիրական ընկերությանը հատկացված գումարը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով հատկացնել «Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

14. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության պետին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման N 2 հավելվածում նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը.

2) մինչև 2013 թվականի ապրիլի 1-ը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «Հանրակացարաններ» փակ բաժնետիրական ընկերությունը.

3) լուծարման գործընթացը սահմանված կարգով իրականացնելու նպատակով ստեղծել լուծարային հանձնաժողով և դրա կազմում ընդգրկել Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 14-ի N 752 որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետում նշված մարմինների ներկայացուցիչներին:

*(14-րդ կետը փոփ. 07.03.12 N 250-Ն, 22.11.12 N 1462-Ն, 02.04.15 N 345-Ն, 20.10.16 N 1070-Ն)*

15. Սահմանել, որ «Հանրակացարաններ» փակ բաժնետիրական ընկերության լուծարման հաշվեկշիռը կազմելու օրվա դրությամբ հանձնաժողովը պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո այդ ընկերության դեբիտորական պարտքերի ստացման և այլ պահանջների իրավունքը հանձնում է Հայաստանի

Հանրապետության ֆինանսների նախարարությանը, իսկ բաժնետիրական ընկերության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը՝ «Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնելու նպատակով:

*(15-րդ կետը լրաց. 02.04.15 N 345-Ն)*

**Հայաստանի Հանրապետության վարչապետ      Տ. Սարգսյան**      2011 թ. սեպտեմբերի 2 Երևան

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2011 թվականի  
օգոստոսի 25-ի N 1241-Ն որոշման

**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**«ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆՆԵՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ**

1. «Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է (այսուհետ՝ կազմակերպություն):

2. Կազմակերպությունն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ հիմնադիր) 2011 թվականի օգոստոսի 25-ի N 1241-Ն որոշմամբ՝ հիմնադրման միջոցով:

3. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

4. Հիմնադրի և կազմակերպության միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

5. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն ու անգլերեն անվանմամբ կլոր կնիք:

6. Կազմակերպությունը կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

7. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և հաշիվներ բանկերում՝ Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով:

8. Կազմակերպության անվանումն է՝

- 1) հայերեն լրիվ՝ «Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպություն.
- 2) հայերեն կրճատ՝ «Հանրակացարաններ» ՊՈԱԿ.
- 3) անգլերեն լրիվ՝ «Hanrakacaranner» State Non Comertion Organization.
- 4) անգլերեն կրճատ՝ «Hanrakacaranner» SNCO:
- 9. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Մոլլոբակյան 29/1:

*(9-րդ կետը փոփ. 20.10.16 N 1070-Ն)*

**II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

10. Կազմակերպության գործունեության հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված ուղեգրերի հիման վրա հանրակացարանային սենյակներում բնակեցման, սույն որոշման N 2 հավելվածում ընդգրկված շենքերում ընդհանուր օգտագործման տարածքների (այդ թվում՝ նկուղների և տանիքների)՝ պահանջվող սանիտարահիգիենիկ պայմանների և լուսավորության ապահովման, աղբահանության կազմակերպմանն ուղղված սպասարկման աշխատանքների կատարումն է:

*(10-րդ կետը փոփ. 20.10.16 N 1070-Ն)*

11. Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության «Տարածքների սպասարկման աշխատանքների իրականացում» տեսակը:

### III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12. Կազմակերպության իրավունակությունը ծագում է օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

13. Կազմակերպության իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով:

14. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող:

15. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի, իսկ հիմնադիրը՝ կազմակերպության պարտավորությունների համար:

16. Կազմակերպության իրավունքները կարող են սահմանափակվել օրենքով նախատեսված դեպքերում և սահմանված կարգով:

17. Կազմակերպությունը պարտավոր է՝

1) օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել հաշվետվություններ:

2) ապահովել կազմակերպության փաստաթղթերի պահպանումը:

18. Կազմակերպության պահպանման տարեկան ծախսերի նախահաշիվը, դրանում առանձին ծախսատեսակների նորմատիվները (ներառյալ աշխատավարձը) և հաստիքացուցակը հաստատվում են լիազորված պետական մարմնի կողմից:

### IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

19. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը և գործադիր տնօրենը:

20. Կազմակերպության հիմնադրի բացառիկ իրավասության հարցերն են՝

1) կազմակերպության հիմնադրումը:

2) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը:

3) կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը:

4) կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը:

5) կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը:

6) օրենքով նախատեսված այլ հարցերի լուծումը:

21. Լիազորված պետական մարմնի լիազորություններն են՝

1) կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը:

2) կազմակերպության գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար համաձայնություն տալը:

3) կազմակերպության տարեկան հաշվետվությունների և տարեկան հաշվեկշռի հաստատումը:

4) կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը:

5) կազմակերպության գործադիր տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները կասեցնելը կամ ուժը կորցրած ճանաչելը:

6) կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողության իրականացումը:

7) կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ վերահսկողության իրականացումը:

8) օրենքով և հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառնություններ:

22. Կազմակերպության գործադիր տնօրենը գործում է սույն կանոնադրության, հիմնադրի և լիազոր մարմնի կողմից տրված հանձնարարականների համաձայն:

23. Կազմակերպության գործադիր տնօրենը ղեկավարում է կազմակերպության ընթացիկ գործունեությունը և դրա հետ կապված՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում տնօրինում է կազմակերպության գույքը (այդ թվում՝ ֆինանսական միջոցները) և գործարքներ կնքում կազմակերպության անունից:

2) ներկայացնում է կազմակերպությունն այլ մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում:

3) գործում է առանց լիազորագրի և տալիս լիազորագրեր:

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր (այդ թվում՝ աշխատանքային):

5) բանկերում բացում է կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ:

6) սահմանում է կազմակերպության կառուցվածքը:

7) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և հսկում դրանց կատարումը:

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում կազմակերպության աշխատողներին:

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և հիմքերի առկայության դեպքում աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին:

10) կազմակերպության աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, հիմնադրի և լիազոր մարմնի հանձնարարականներով նախատեսված այլ լիազորություններ:

## **V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

24. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող ու կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից, ինչպես նաև՝ կազմակերպության ամրացված գույքի օգտագործման արդյունքում ստացված եկամուտներից:

25. Կազմակերպությունն իրավունք ունի, օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան, իր հայեցողությամբ, տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

26. Հիմնադիրը կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

27. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

28. Կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

## **VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

29. Կազմակերպությունը, սույն կանոնադրությամբ նախատեսված խնդիրներն իրականացնելիս, ստացված շահույթն ամբողջությամբ ուղղում է իր կանոնադրական նպատակների իրականացմանը:

30. Յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո մնացած կազմակերպության շահույթը կազմակերպության լիազորած պետական մարմնի թույլտվությամբ ուղղվում է կազմակերպության տեխնիկական զարգացման ֆոնդին:

## **VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ**

31. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

32. Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

33. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և

պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

34. Կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

35. Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

36. Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

37. Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

*(հավելվածը փոփ. 20.10.16 N 1070-Ն)*

**Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար Դ. Սարգսյան**

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2011 թվականի  
օգոստոսի 25-ի N 1241-Ն որոշման

**Կ Ա Ջ Մ**

**«ՀԱՆՐԱԿԱՅԱՐԱՆՆԵՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՍՐԱՑՎՈՂ ԳՈՒՑՔԻ**

NN ը/կ	Գտնվելու վայրը	Արժեքը, շենքը, շինության մակերեսը (քառ. մետր), հողամասի չափը (հա)
1.	Քաղ. Երևան, Նոր Նորքի 2-րդ զանգվ., Մոլդովական 29/1	29.166879 դրամ արժեքով, 6226.0 քառ. մետր մակերեսով և 0.37613 հա հողամասով (Մոլդովական 29/2 շենքի հողամասի հետ միասին)
2.	Քաղ. Երևան, Նոր Նորքի 2-րդ զանգվ., Մոլդովական 29/2	56.730753 դրամ արժեքով, 2144.53 քառ. մետր մակերեսով
3.	Քաղ. Երևան, Շիրակի 2ա/7	7.495252 դրամ արժեքով, 2273.7 քառ. մետր մակերեսով և 0,87562 հա հողամասով
4.	Քաղ. Երևան, Վարդաշեն, 6-րդ փող., N 68	16929274 դրամ արժեքով, 669.3 քառ. մետր մակերեսով և 0,114202 հա հողամասով
5.	<i>(կետն ուժը կորցրել է 26.05.16 N 543-Ն)</i>	
6.	ՀՀ Կոտայքի մարզ, քաղ. Աբովյան, Հատիսի փող., ճարտարագիտական քոլեջի հանրակացարան	32337604 դրամ արժեքով, 4856.59 քառ. մետր մակերեսով և 0.1102 հա հողամասով
7.	ՀՀ Արարատի մարզ, գ. Դարբնիկ, 5-րդ փող., N 3	19053914 դրամ արժեքով, 2605.3 քառ. մետր մակերեսով և 1.07 հա հողամասով

*(հավելվածը փոփ. 22.11.12 N 1462-Ն, 26.05.16 N 543-Ն, 20.10.16 N 1070-Ն)*

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար**

**Դ. Սարգսյան**